Աղբիւրի յաւելուած

Տարազը լոյս է տեսնում շաբաթը մի անգամ կիրակի օրերը

№ 6 կիրակի 11 փետրուարի | եօթերորդ տարի 1896

Շարունակւում է ներկայ 1896 թ. բաժանորդագրութիւնը պատկերազարդ Աղբիւր ամսագրի և Տարազ շաբաթաթերթի

ԱՂԲԻՒՐԻ տարեկան գինը 3 ր. (արտասահմանի 4 ր.), ՏԱՐԱԶԻՆ 6 ր. (արտասահմանի 10 ր.). առանձին Տարազը—50 կ., Աղբիւրը—25 կ.
ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶ միևնոյն հասցէով գրող բաժանորդները ստանում են պրեմիաներ և զանազան յաւելուածներ, ընծաներ:
Հասցէն՝ Тифлисъ, редакція иллюст. жур. Агбюръ-Таразъ կամ Tiflis (Caucase) Réd. des jour. Agbur et Taraz.

Վիկտորիա թագուհի

Անգլիան կառավարւում է իր ժողովրդով, իսկ նրա թագուհին, այդ ժողովրդի պաշտելին կատարում է իր արքայական պարտաւորութիւններն իր հպատակների կամքի համեմատ։

Վիկտորիա թագուհին իր ամուսնու մահից յետոյ քաշւել է ակտիւ գործունէութիւնից, իր երկրի կառավարութեան ղեկը միշտ յանձնելով նրանց, որոնք ժամանակին և հանգամանքին նայած՝ անցնում են այս կամ այն կուսակցութեան։

Մեծն Բրիտանիան աշխարհիս ամենամեծ, ամենահարուստ, ամենալուսաւոր և ամենահզօր պետութիւնն է։ Նայեցէք Եւրոպայի քարտէզին, կարծէք ամենափոքր երկիրը լինի եւրոպական միւս պետութիւնների համեմատութեամբ, մի կղզի ցամաքից պատւած։ Սակայն այդ փոքրիկ ցամաքը շրջապատուած ովկիանոսով միացել է ամբողջ աշխարհիս հետ՝ իր անթիւ նաւերով և շաղկապել իր հետ շատ աշխարհներ, ու նրանցից կազմել է մի այնպիսի ամբողջութիւն, որի նմանը եւրոպական ոչ մի պետութիւն չունի։ Անգլիան բացարձակ գերիշխան է աշխարհիս բոլոր ծովերի և ովկիանոսների վրայ, նրա պատերազմական նաւատորմիղը հաւասար է Ռուսիայի և Ֆրանսիայի հետ միասին վերցրած նաւատորմիղին։

Վիկտորիա թագուհի

Աշխարհում ոչ մի պետութիւն և ժողովուրդ այնքան հարուստ չէ, որքան Մեծն-Բրիտանիան, սակայն աշխարհիս երեսին ոչ մի պետութեան մէջ էլ այնքան սովամահ եղող չի լինում, որքան Անգլիայում։ Այդ ժողովուրդը լուսաւորուած է քրիստոնէական վարդապետութեամբ և մարդասէր է, պաշտում է Յիսուսին այնքան ջերմեռանդ, որ ոչ մի ուրիշ աշխարհի ժողովուրդ այդ աստիճան չէ երկրպագում Նրան և դեռ չէ ըմբռնել Նրա աւետարանի փրկարար իմաստը, բայց և ոչ մի մարդ այս աշխարհում այնքան եսական չէ, ոչ մի պետութեան արտաքին քաղաքականութիւն այնքան խնդիրներ չէ յարում իր սոսկ շահերը միշտ վեր դասելով, օտար աշխարհի ազգութիւններին իրան գործիք շինելով, որքան Անգլիան։

Իր բոլոր բարոյական, մտաւոր և նիւթական բացարձակ առաւելութիւններով հանդերձ՝ այսօր Մեծ Բրիտանիան եւրոպական միւս պետութիւնների անկեղծ համակրանքը, վստահութիւնը չէ վայելում։ Գուցէ շատ անգամ և բոլորովին նրա անկեղծ մարդասիրական ձեռնարկները չեն արժանանում միւս ազգութիւնների կողմից աջակցութեան, որովհետև մինչև այժմ նրա արտաքին քաղաքականութիւնն անկեղծ գործունէութեան հզօր պտուղներ չէ տուել։

ԹԷՈԴՈՐԱ *)

Պատմական վէպ

Ոսկեզօծ շրջանակների վրայից սուրբերի մոզաիքական դէմքերը, աղօտ լոյսի տակ, խստահայեաց նայում էին տեսիլների նման: Այս անկիւնում, ուր մեռնում էր փառասէրը, ամեն ինչ լուռ էր ու մըռայլ, երբեմն միայն լսւում էր հիւանդի թոյլ, ընդհատուող շնչառութիւնը:

Իպպարխն ու Կլէօնը կանգնած սենեակի հեռու անկիւնում՝ խօսում էին հազիւ լսելի ձայնով: Իպպարխը նոյնն էր, ինչ մենք ճանաչեցինք նրան այն ժամանակ, երբ Ակաչիօյի աղջիկներին իր հովանաւորութեան տակ առաւ: Նա աւելի առնական էր դարձել, բայց կանոնաւոր դէմքի գծերի կանացիական քնքշութիւնը միևնոյնն էր մնացել: Նրա հօրեղբօրորդի Կլէօնը, որ տարիքով աւելի փոքր էր նրանից, վճռականութիւն, տոկունութիւն և եռանդ արտայայտող կերպարանք ունէր:

—Ի՞նչպէս ես դու կարծում,—հարցրեց Կլէօնը,—հօրեղբայրը կառողջանա՞յ:

—Կասկածում եմ,—պատասխանեց Իպպարխը: Նա չափազանց տկար է, և այնքան թուլացել է նրա կեանքի ոյժը, որ հազիւ թէ կարողանայ դիմադրել հիւանդութեան:

—Մտածե՞լ ես դու այն բոլոր խռովութիւնների մասին, որ անխուսափելի տեղի է ունենալու նրա մահից յետոյ: Մեր հօրեղբայրը, ինչպէս գիտես, օրինաւոր ժառանգ չէ թողնում: Ասա՛ ինձ, Իպպարխ, այդ ամենի մասին քո կարծիքը: Օրէնքով քեզ է պատկանում գահաժառանգութեան իրաւունքը, որովհետև նրա ազգականներից ամենամօտը դու ես: Ասա՛, կընդունե՞ս դու թագը:

—Ի հարկէ, ես պատրաստ եմ ընդունելու. թագը մի այնպիսի պարգև է, որից չեն հրաժարւում: Բայց դու կարծում ես ինձ կառաջարկի՞ն: Դու ուշադրութեան չես առնում այն ահագին ինտրիգները, որոնք առհասարակ տեղի են ունենում արքունիքում, սենատի և զօրքերի մէջ, երբ մեռնում է կայսրը: Ամեն մէկն աշխատում է իր թեկնածուի համար, նրա մասին բարեխօսում է, գովաբանում, մինչև երկինք բարձրացնում, կուսակիցներին գնում, և այդպիսով կռիւը քանի գնում՝ աւելի է բորբոքւում: Սակայն վերջ ի վերջոյ յաղթութիւնը թեքւում է ոչ թէ օրինաւոր ժառանգների, այլ խորամանկ ու ճարպիկ խռովարարների կողմը:

—Բարեբախտաբար, այս անգամ կին չկայ արքունի պալատում, ուստի և ինտրիգներն այնքան էլ սաստիկ չեն լինիլ:

—Պալատում, ճշմարիտ է, կանայք չկան, սակայն կան ներքինիներ, և նրանցից իւրաքանչիւրը, հաւատա ինձ, տասը կնոջ արժէ: Ես միշտ զլանում էի ամեն տեսակ վատթար միջոցներով բարեկամներ գրաւել, նամանաւանդ պալատական շողոքորթների և խռովարարների միջից, այդ բանի համար էլ նրանք ամենքն ինձ սաստիկ ատում էին, իսկ ամենից աւելի պալատական ներքինիները, որոնք, հասկանալի է, հակառակ կլինեն իմ կայսր ընտրուելուս:

—Ուրեմն ինչ ես մտադիր անելու:

—Ինձ մնում է երկուսից մէկը, կամ ես կայսր կընտրուեմ, կամ թէ իմ տեղը կբռնէ խռովարարների առաջարկած մի ուրիշ թեկնածու: Այս վերջին դէպքում, ի հարկէ, ինձ հանգիստ չեն թողնիլ. որովհետև թագաւորել, երբ օրինական ժառանգը դեռ կենդանի է, շատ անյարմար է, նշանակում է կաշխատեն ինձ սպանել: Որովհետև իմ ընտրութիւնը ես համարում եմ բոլորովին անհնարին և չեմ էլ ուզում սպանուել, ուստի վճռեցի հեռանալ այստեղից: Ես արդէն ամեն պատրաստութիւն տեսել եմ գնալու համար. նաւ ձեռք բերայ, որ կանգնած է Բոսֆորի վրայ, և բեռնաւորեցի նրան իմ բոլոր հարստութեամբ: Հէնց որ հօրեղբայրս հոգին կաւանդէ և մահուան լուրը դեռ չտարածուած, ես դուրս կգամ պալատից և ուղղակի նաւահանգիստ կըգնամ, մակոյկ կընստեմ և կհրամայեմ տանել ինձ նաւը: Առագաստները կբարձրացնեն, — մնաս բարեաւ, Բիւզանդիոն կասեմ:

—Ո՞ւր պէտք է գնաս:

—Դեռ ես ինքս էլ չգիտեմ: Ինձ հետ կտանեմ և իմ Զոյային. տիեզերքի որ անկիւնն էլ ես գնամ նրա հետ, ամեն տեղ էլ ինձ համար արքայութիւն կլինի:

—Իսկ եթէ քեզ կայսր հրատարակեն:

—Այն ժամանակ, ի հարկէ, յետ կդառնամ և թագը կընդունեմ: Ես միայն ցանկանում եմ, որ ընտրութիւնը կատարւի իմ բացակայութեան ժամանակ:

—Իսկ ինձ ինչ խորհուրդ ես տալիս անելու:

—Հետևել իմ օրինակին: Աչքի առաջ ունեցիր, եթէ ուզուրպատորները (թագ յափշտակողները) յաղթող հանդիսանան, իմ բացակայութեան միջոցին գահաժառանգութեան իրաւունքը քեզ է պատկանում: Ուրեմն այստեղ քեզ համար էլ միևնոյն վտանգը կայ, ինչ որ ինձ համար է: Խռովարարները հանգիստ չեն լինիլ, մինչև որ չ'ոչնչացնեն քեզ — գահաժառանգութեան օրինական բոլոր իրաւունքը ունեցողին: Հետևապէս քեզ համար էլ ամենից լաւն է այստեղից հեռանալ: Ես բոլոր հոգով պատրաստ եմ քեզ տեղ տալ իմ նաւի վրայ, եթէ դու կամենաս հետևել իմ խորհրդին:

Կլէօնը չպատասխանեց և կարծես խոր մտածմունքի մէջ ընկղմւեցաւ:

—Դէհ, դո՛ւ ինչպէս ես վճռում,—հարցրեց նրան Իպպարխը:

—Թող տուր մտածեմ:

Մի փոքր ժամանակ դրան հետևեց լռութիւն:

—Իսկ եթէ քո գնալուց յետոյ ես կռւի մէջ կամենայի փորձել իմ բախտը գահի համա՞ր,—յանկարծ ասաց Կլէօնը՝ մտածմունքից դուրս գալով:

---

*) Տես Տարազ № 5.

—Շնորհ արա, ես լիազօր խրատունք եմ տալիս:

—Կըփորձեմ, ինչ որ Աստուած կըտայ, իմ կեանքը *վտանգի* վրայ կըդնեմ, գուցէ յաջողւի, իսկ եթէ ոչ, գերեզմանում կըքնեմ անխռով:

—Եթէ այդպէս է, պարապ մի նստիր, եղիր եռանդոտ: Փող ունիս: Բաժանիր նրանց, որպէս զի կարողանաս համախոհներ գտնել: Եղիր առատաձեռն և՛ գործով և՛ խօսքով: Աշխատիր սենատորների մէջ էլ այդպիսիները գտնել: Նրանց հետ վարւիր առանձին յարգանքով և ուշադրութեամբ: Ներքինիներին հաւատացրու, որ դու նրանց խորհուրդներով կըղեկավարւես, մի մոռանար նոյնպէս և զինւորներին, նրանց գինի բաժանիր, խոստումներ տուր: Ահա թէ դու ինչ պիտի անես, և ոչ թէ անտարբերութեամբ սպասես հօրեղբօր վախճանին: Եթէ այդ բոլորը դու կարող ես կատարել և քեզ խեղդամահ չեն անիլ, այն ժամանակ կարող ես յուսալ, որ գահ կըբարձրանաս: Բոլոր սրտով քեզ ցանկանում եմ յաջողութիւն և գնում եմ:

Եղբօրորդիների խօսակցութիւնը ընդհատուեց երկու անձնաւորութիւնների երևալով: Մէկը Ամանցիոն էր, կայսեր սիրելի ներքինին, իսկ միւսը արքունի աւագ բժիշկ Փիլիկկոպոն: Երկուսն էլ մօտեցան հիւանդի անկողնին: Բժիշկը ձեռքը դրեց կայսեր ճակատին, ապա շօշափեց զարկերակը:

Ներքինին ուշադրութեամբ հետևում էր բժշկին, կամենալով նրա դէմքի արտայայտութիւնից հասկանալ այն, ինչ որ նրան սաստիկ հետաքրքրում էր: Փիլիկկոպոն կռացաւ Ամանցիօյի ականջին և սկսեց ինչ որ շշնջալ, յետոյ նկատելով երկու հօրեղբօրորդիների ներկայութիւնը, լռեց:

Այդ րոպէին հիւանդը հեծկլտաց և սկսեց խեղդւելով հազալ:

—Ի՞նչպէս էք գտնում մեր օգոստափառ հօրեղբօրը, ազնիւ Փիլիկկոպո, հարցրեց Իպպարիսը:

—Օգոստափառ Պատրոնը այսօր համեմատաբար աւելի լաւ է, ողորմած պարոն,—պատասխանեց բժիշկը:—Մի քանի օրից յետոյ, տէր Երրորդութեան օգնութեամբ, մենք նրան կատարելապէս առողջացած կըտեսնենք:

Այդ ասելով բժիշկը՝ խոր գլուխ տւաւ և համր քայլերով դուրս գնաց սենեակից: Ամանցիօ ներքինին լուռ հետևում էր նրան:

—Անաստասը մի շաբաթից աւելի չի ապրիլ:

—Մի՞թէ,—գոչեց ներքինին և ուրախութեան արտայայտութիւնը պայծառացրեց նրա այլանդակ դէմքը:

—Եւ այդ բանը կարո՞ղ էք դուք ինձ հաստատել:

—Այո, կարող եմ երդւել իմ քրիստոնէական հաւատով:

Բարեկամները բաժանւեցան:

Անցնելով երկար շարք սենեակները, գալէրէյան և դռները, Ամանցիոն մտաւ մի առանձնասենեակ, ուր անհամբերութեամբ նրան սպասում էր մի հաստամարմին պարոն, բծերով ծածկւած, կարմիր դէմքով: Դա մեր հին ծանօթ Թէօկրիտ պատրիկն էր: Ներքինու մտնելուն պէս՝ նա տեղից վեր թռաւ և գոչեց.

—Հը, ինչ, ինչպէս է…

—Մի շաբթից յետոյ,—հանդարտութեամբ և խորհրդաւորութեամբ պատասխանեց Ամանցիոն,—դուք կայսր կըլինէք:

Բայց մօտիկից ծանօթանանք մեռնող կայսեր այդ խորամանկ սիրելիի հետ: Ամանցիոն ինքն էլ չըգիտէր, թէ որն է իր հայրենիքը: Այդ ժամանակից քսան տարի առաջ նրան Կ. Պոլիս բերին արաբները, որոնք ներքինացրած երեխաներ էին վաճառում, և ստրուկների խմբի հետ ծախեցին Զէնոն կայսեր վրայ: Մանուկ Ամանցիոն պալատ մտնելով շնորհիւ իր խորամանկութեան, հաճոյակատարութեան և գործունէութեան, կարողացաւ սիրելի դառնալ և հասաւ արքունական *Պրապոզիտի* առաջնակարգ աստիճանին: Անաստաս կայսրը գահ բարձրանալով, ուշադրութիւն դարձրեց այդ լաւ և հնազանդ ծառայ Ամանցիօյի վրայ և նրան իր *Փավորիտը* նշանակեց: Ներքինին կայսեր մօտ բռնեց զեկուցանողի դերը և որպէս միջնորդ նրա ողորմածութեան, կարողացաւ իր համար ահագին հարստութիւն դիզել: Բայց այդ դեռ քիչ էր: Ամանցիոն բացի ագահութիւնից, ունէր և չափազանց փառասիրութիւն, նա ուզում էր, որ իրան և փող վճարէին և միևնոյն ժամանակ խոնարհւէին նրա առաջ:

Նա սաստիկ սիրում էր հրամայել և կարգադրութիւններ անել: Նա կարողացել էր շատ սենատորների համակրութիւնը գրաւել: Խորամանկութեան, ճարպկութեան և փողի օգնութեամբ նա կարող էր յոյս ունենալ կայսր ընտրւելու: Սակայն, ի մեծ ցաւ Ամանցիօյի, բիւզանդական կայսրութեան մէջ մի օրէնք կար, որը ներքինիներին անպայման արգելում էր կայսր ընտրել: Այդ օրէնքի մէջ նկատելով իր ընտրութեան անյաղթելի արգելքը, ներքինին մտածեց կայսր ընտրել մի այնպիսի մարդու, որն իրան անկեղծաբար նւիրւած լինէր և իրանից էլ կախում ունենար: Այնպէս որ, իսկապէս ինքը Ամանցիոն կայսր լինէր: Ազնւաշուք Թէօկրիտ պատրիկի մէջ նա յոյս ունէր գտնել այն՝ ինչ բանի որ ինքն էր ձգտում: Բայց այս անգամ խռովարարը սխալւեցաւ: Ազնիւ պատրիկը առերես ընդունեց նրա բոլոր առաջարկած պայմանները. այնուամենայնիւ նա սրտում վճռել էր, որ նրանցից և ոչ մէկը չի կատարիլ, եթէ բախտը նրան թագով վարձատրէ: Ամանցիոն գործում էր մեծ խորագիտութեամբ. Նա սենատորների շատ շատ ձայներ գրաւեց, և խորհուրդ տւաւ Թէօկրիտին գործակալներ ուղարկել ժողովրդի մէջ, որոնք պէտք է պաշտպանէին սենատի ընտրութիւնը: Ապա խորհուրդ տւաւ զինւորներին դրամ բաժանել: Բիւզանդական զօրավարներին խօսեցնելով, դաւադիրները անյարմար գտան նրանց վրայ ազդելու: Միայն մի զօրավար էին նրանք ընտրել,—Յուստինեանոս, որ նահանգապետների գլխաւորը և



Բուլղարիա. Իշխան Ֆերդինանդի ապարանքի սրահում.

Բուլղարիայի գահաժառանգ իշխան Բորիսի մկրտութեան առիթով.

կայսերական գւարդիայի հրամանատարն էր։ Այդպիսի վճիռ ընդունելով՝ անկարելի էր նրա իրագործման ժամանակը կորցնել։ Փիլիկկոպոն Անաստասի կեանքը մի քանի օր էր միայն նշանակել։

Ամանցիօն բաժանւելով Թէօկրիտից, անյապաղ գնաց զօրապետի մօտ։

Յուստինեանոս, ի թիւս նահանգական կառավարիչների ապրում էր արքունիքում։ Նա հին, հզօր զինւորի ներկայացուցիչ էր։ Ծնւելով Դակիայում (Բուլղարիա) իր երիտասարդութեան առաջին տարիներում նա երկրագործ էր։ Ցանկանալով իր բախտը փորձել, նա իր երկու ընկերների հետ թողեց հայրենի գիւղը։ Ոտով, քիչ չոր հաց պաշար առած, երեք փոքրիկ բուլղարացիները մի կերպով Կոնստանդնուպոլիս հասան, ուրեղ այն ժամանակ թագաւորում էր Լէօն կայսրը, և խնդրեցին ընդունել իրանց զինւորական ծառայութեան մէջ։ Որովհետև դրանք բարձրահասակ էին, ուստի գւարդիայի մէջ նշանակեցին։ Յուստինեանոսը շուտով աչքի ընկաւ իսաւրական և պարսկական պատերազմներում. Նրան աստիճանով շարունակ մեծացնում էին, և յիսուն տարւայ զինւորական ծառայութեան ընթացքում, նա ստացաւ և՛ զօրապետութեան աստիճան և՛ կոմսի տիտղոս և՛ սենատորի կոչում։ 68 տարեկան հասակում Յուստինեանոսը դեռ ևս շատ ժիր էր, և նշանակւեցաւ կայսերական գւարդիայի հրամանատար։ Պարծենալով իր ռազմագիտական հմտութեամբ, ծեր զօրապետը սովորութիւն չունէր քաղաքական հարցերով զբաղւելու և խառնւելու պալատական ինտրիգների մէջ։ Ամէնքը նրան ճանաչում էին որպէս ռազմական գործի հեղինակաւոր մասնագէտ, թէև ոչ մի կրթութիւն չէր ստացել և հազիւ կարողանում էր իր անունը ստորագրել։ Այնուամենայնիւ վերջին դէպքը ամենևին չէր խանգարում նրան ընդհանուրի համակրութեան արժանանալու։ Զօրապետը լաւ էր ընդունւում ամէն մի պալատականի մօտ, ճիշտ զինւորին յատուկ, իր շիտակութեան համար և համարւում էր կատարեալ ազնիւ մարդ։

Այդ բոլորը աչքի առաջ ունենալով, Ամանցիօնի համար շատ կարևոր էր ծեր զօրապետին իր կողմը գրաւել։ Ներքինին գտաւ Յուստինեանոսին տանը՝ ընթրելիս։ Համեստ կերակուրը, սոխը մսի հետ, որ ուտում էր հին զինւորը, խիստ հակասում էր պալատի փարթամ կահաւորութեան, բոլոր ոսկեղէն զարդարանքներին, գորգերին, մոզայիկին և այլն։ Չընայելով շրջապատող շքեղութեան, Յուստինեանոսը պահպանել էր զինւորական կեանքի պարզութիւնը։ Ամանցիօն, ողջունելով զօրապետին, նստեց առաջարկւած տեղը, և մի առժամանակ լռութիւն էր պահպանում, դիտելով զօրապետին, որն իր կողմից լռիկ բացատրութեան էր սպասում։ Ներքինին դժւար կացութեան մէջ էր, բայց այն միտքը, որ Անաստաս կայսրը միայն մի շաբաթ է ապրելու, նրան վճռականութիւն էր ներշնչում։ Պալատական խռովարարը կարճ խօսքերով հասկացրեց նրան բանի էութիւնը։ Նա ուղղակի յայտնեց զօրապետին, որ Անաստասի մահից յետոյ հարկաւոր է կայսր ընտրել Թէօկրիտ պատրիկին, որի կողմն է և՛ սենատը և՛ ժողովուրդը, մնում է միայն համաձայնեցնել և արքունի զօրքը։ Եւ որովհետև վերջինս ուղղակի կախւած է Յուստինեանոսից, ուստի նա՝ Ամանցիօն, եկել է նրան առաջարկելու դրամական որոշ գումար զինւորների վերաբերմամբ կարգադրութիւններ անելու համար, և խնդրում է ուղղակի ասել, համաձայնում է արդեօք Թէօկրիտ պատրիկի կողմը բռնելու։

—Համաձայն եմ,—կտրական պատասխանեց Յուստինեանոսը։

Ուրախացած ներքինին սեղմեց նրա աջը և ասաց.

—Կոմս, ձեզ աւելորդ է հրահանգներ տալ, դուք ինքներդ գիտէք թէ ինչ է հարկաւոր անել։

— Այո, ես գիտեմ։

— Այժմ, կոմս, խնդրում եմ՝ մի քանի րոպէ ինձ սպասել, ես այս րոպէիս կվերադառնամ,—ասաց Ամանցիօն և դուրս գնաց։

Մի փոքր ժամանակից յետոյ վերադարձաւ Ամանցիօն երկու ստրուկների ուղեկցութեամբ, որոնք ձեռքներին բռնել էին մի ծանր արկղ։ Ներքինին հրամայեց ստրուկներին վայր դնել և հեռանալ, իսկ ինքը բանալին տալով զօրապետին՝ ասաց.

—Այստեղ են գործի համար անհրաժեշտ դրամները։

Ապա զօրապետին բարի գիշեր մաղթելով՝ դուրս գնաց Ամանցիօն։

Մենակ մնալով, Յուստինեանոսը բացաւ արկղը և զարմանքից յետ գնաց։ Արկղը դրամներով լի էր։ Հին զինւորը երկար ժամանակ հիանում էր այդ գանձով, վերջապէս կողպեց արկղը և սկսեց անց ու դարձ անել սենեակում։ Նրա հոգու մէջ, ինչպէս երևում էր, կռիւ էր տեղի ունենում։ Նա երբեմն կանգ էր առնում սենեակի մէջ տեղը, մտախոհութեամբ գլուխը կրծքին թեքելով, երբեմն նորից շտապ քայլերով անց ու դարձ անում, նորից կանգ առնում։ Ի վերջոյ, ինչպէս երևում է, վճռեց։ Կանչեց ծառային և հրամայեց ներս հրաւիրել իր մօտ դպրին։ Նա եկաւ, Յուստինեանոսը նրան հրամայեց *պերգամենտի* վրայ գրել մի քանի խօսք և կնքել։ Երբ ատենադպիրը դուրս գնաց, ներս մտաւ սուրհանդակը։

—Դու եղե՞լ ես Սարդիկա Դաչիայում,—հարցրեց նրան զօրապետը։

—Եղել եմ, վսեմափայլ կոմս։

—Ճանաչո՞ւմ ես Բելենիցու բնակարանը։

—Ճանաչում եմ, գերազնիւ կոմս։

—Շատ գեղեցիկ։ Թամքիր մի լաւ ձի և սլացիր Սարդիկօ, գտիր այնտեղ Բելենիցուն, յանձնիր այս *պերգամենտը* նրան և ասա, որ գնա Բոզկեան վանականների վանքը, թող այնտեղ կարդան ինչ որ գրուած է այստեղ։ Շտապիր, ժամանակ մի կորցնիր։

Սուրհանդակը իր ծոցը դրեց *պերգամենտը*, ասաց որ նորին վսեմափայլութեան կամքի հրամանը բառ առ բառ կատարուած կըլինի. խոնարհ գլուխ տուաւ և դուրս գնաց:

Պէրզամեննտի վրայ երկու խօսք էր միայն գըրուած.

«Ե՛կ, Ուսպլանդօ»:

(Կըշարունակուի)

ՄԱՅՐԸ

(Նեկրասովից)

Լսելով կուլի արհաւիրքներին,
Ամեն մի ընկած նոր զոհի մասին,
Ես չեմ ափսոսում կնոջն, ընկերին,
Եւ ոչ էլ նոյն իսկ իրան հերոսին...
Կմխիթարուի, ո՜հ, կինը մի օր,
Ընկերն ընկերին կանի մոռահան.
Բայց մի հոգի կայ մի տեղ սգաւոր—
Նա յիշելու է մինչեւ գերեզման...
Այս մեր կեղծաւոր, ստոր աշխարքում,
Այսքան զազրելի գործերի շարքում
Ես անկեղծ եւ սուրբ մի բան տեսայ միայն—
Թշուառ մայրերի արտասուքն է այն:
Նրանք չեն մոռանալ իրանց զաւակին,
Որ խորտակուել է արիւնոտ արտում,
Որպէս սգաւոր ուռենին կրկին
Չի բարձրացնելու ճիւղերը տրտում:

Յովհաննէս Թումանեանց

«ԹԱԳԱՒՈՐ Ի ՏԱՆԷ ԴԱՒԹԻ»

(Professor I. H. Ingraham)

Առաջին Նամակ.

Աղէքսանդրիայից Երուսաղէմ ճանապարհորդելու նկարագրութիւնը.—Գազա.—Յովսէփի հորը.—Մեռեալ ծովը.—Յորդանան. — Երուսաղէմ.—Տաճարի պղծելը. — Յորդանանի հովտում յայտնուած մարգարէի մասին լուրեր:

Թանկագին հայր.

Առաջին պարտքս և առաջին բաւականութիւնս եմ համարում՝ կատարել ձեր հրամանը իսկոյն հաղորդելով Երուսաղէմ հասնելս. և այս տողերս կըծառայեն իբր ապացոյց իմ անփոփոխ հպատակութեան ձեր կամքին: Ոչ մի դէպք ես բաց չեմ թողնիլ գրելու ձեզ ամեն ամիս Եգիպտոս եկող կարաւանի հետ. և եթէ բացի այս կըպատահին և ուրիշները, հաւատացէք, իմ սէրս, որ կարծես կրկնապատկել է անջատումով, չի դանդաղիլ տեղեկանալ նրանց մասին:

Մեր ճանապարհորդութիւնը տեւեց բեն Իսրայէլի հաշուով տասնեօթ օր, իսկ ես տասներորդից յետոյ այնքան ձանձրացայ, որ այլ ևս չըհաշուեցի:

Երեք օր ու գիշեր մենք գալիս էինք ծովի ափով, և ես չըկարողացայ կշտանալ երկրի հետ միացող երկնակամարի անսահման տարածութեան վսեմ պատկերով: Իմ բախտից մեր մօտից անցնում էին բազմաթիւ նաւեր, և բարի ռաբբին, միշտ պատրաստ գոհացնելու իմ հետաքրքրութիւնս, բացատրում էր ինձ նրանց գնացած ճանապարհները: Նրանցից մի քանիսը գնում էին Սիդօն, միւսները մեկնում էին դէպի Նեղոսի ափերը: Նրանցից մէկի հետ, թանկագին հայր, մտքով ուղարկեցի ձեզ աղօթքներիս հետ միասին և իմ ամենալաւ բարեմաղթութիւններս:

Ծովափնեայ ճանապարհից անապատ ծռուելու տեղը ցամաքի վրայ դուրս ընկած տեսանք ահագին մեծութեան նաւ: Նրա սև, մերկացած կազմութիւնը, որ անօգնական պարկած էր երկրի մակերևոյթի վրայ, յիշեցնում էր ծովային հրէշի, կամ ցամաքի վրայ սատակող ծովաձիու: Ես չըկարողացայ նրա վրայ նայել առանց խորին ցաւակցութեան: Ռաբբին պատմեց ինձ, որ նա Աղէքսանդրիայից գնում էր Իտալիա՝ բեռնաւորուած ցորենով, բայց փոթորկի հանդիպելով՝ խորտակուել և դուրս է նետուել ցամաքի վրայ: Ի՜նչպէս սարսափելի պիտի լինի փոթորիկը ծովի վրայ: Ես յոյս ունէի Լեվիաթոնին տեսնելու, բայց իմ ցանկութիւնս չըկատարուեցաւ և ռաբբին, որը «ամեն բան գիտէր», բացատրեց ինձ, թէ նրանք հազիւ են պատահում Միջերկրական ծովում, և թէ աւելի յաճախ պատահում են նրանց Հերքիւլէսեան սիւների մօտ, այնտեղ, որտեղ աշխարհի վերջն է:

Գազայում երկու օր կանգ առանք. մենք ներս մտանք քաղաքի դռներով, նրանցով, որոնց Սամփսոնը հանելով աղխերից, տարաւ սարի վրայ դրեց, քաղաքից երկու մղոն հեռու դէպի հարաւ-արևելք: Մեզ ցոյց տուին և քաղաքի ուրիշ արժանայիշատակ տեղերը. ի միջի այլոց և այն կուռի դաշտը, որտեղից, արիւնահեղ ճակատամարտից յետոյ, փախուստ դարձրեց փղշտայիններին, և առիւծի այրը, որտեղից դուրս եկաւ նրա սպանած առիւծը և յետոյ ծառայեց նրան իբրև միջոց խորհրդաւոր հանելուկի համար: Առաջնորդ-արաբացիները մեր ուշադրութիւնը հրաւիրեցին այն ցամաքած հորի վրայ, որտեղ ձգել էին Յովսէփ իշխանին (նահապետին) իր եղբայրները, տասը նահապետները, և այն ժայռը, որի վրայ նրանք բաժանել էին քսան արծաթը, իսմայէլացիներից ստացած նրա գինը: Ինձ թւում էր, թէ ծերունի արաբացին առանձին ոգևորութեամբ էր ընդարձակում այդ անցքի պատմութիւնը, կարծես թէ նա պարծենում էր նրանով, որ մեր քաջասիրտ նախահայրը իրանց գնած ստրուկն էր. և ես մի քանի անգամ նկատեցի, որ կարաւանում գտնուող բոլոր Եդոմացի իսմայէլացիները օգտւում էին իւրաքանչիւր դէպքից, որ բարձրացնեն իրանց ցեղակիցներին ի վնաս Իսրայէլի որդոց: Յարգելի ծերունի Աբին-Յուսուփը, կարաւանի գլխաւորը, մինչև անգամ տաք վիճաբանութեան մէջ մտաւ ռաբբի բեն Իսրայէլի հետ Իսահակի տիրապետութիւնների մասին, որոնց միջով մենք այն ժամանակ անցնում էինք. նա աշխատում էր ապացուցանել, որ և ինքը Իսահակը ստրուկի որդի էր, իսկ Իսմայէլը հօր օրինաւոր ժառանգը, բայց ստրուկ կնոջ խորամանկութեամբ

---

*) Տես «Տարազ» № 3.



ադամը դրախտից արտաքսւած

և հնարքներով վերջինս զրկւեցաւ հայրական ժառանգութիւնից։ Ես հարկաւ շատ հաստատ գիտեմ մեր նախահայրերի պատմութիւնը, և չէի հաւատալ այդպիսի հեքիաթին, բայց արաբացիք յամառութեամբ իրանց աւագի կողմն էին պահում և նոյնքան աշխուժով էին պաշտպանում սուտութիւնը, ինչպէս բեն-Իսրայէլը անհերքելի ճշմարտութիւնը։

Մեր ճանապարհորդութեան վերջին օրւայ առաւօտը հեռու տարածութեան վրայ, դէպի արևելք, երևաց Մեռեալ ծովի շրջակայքը, որտեղ երբեմն ծաղկում էին Սոդոմ և Գոմոր քաղաքները և հոգիս ակամայ ցնցւեց տեսնելով այն զարհուրելի տեղը, որի վրայ այնքան զարհուրելի կերպով թափւեց Եհովայի բարկութիւնը։ Երևակայութիւնս պատկերացնում էր վառած երկինքը, որ ժայթքում էր այրող հնոցի նման մխի, կրակի և բոցի հեղեղներ բազմամարդ քաղաքների և շրջակայ տեղերի վրայ, որոնք այն ժամանակ, համաձայն աւանդութեան, նման էին հարուստ և պտղատու այգու։ Այժմ ինչպէս հանդարտ փռւած է Մեռեալ ծովը կապոյտ, անամպ երկնքի կամարի տակ։ Մի քանի ժամ շարունակ մենք տեսնում էինք նրան և վերջապէս, ինչպէս արծաթեայ շաւիղ, փայլեց հեռւում Յորդանանը։ Իսկապէս մեր ճանապարհը, թէև մեզ երկար երևեցաւ, ինչպէս ասում են, շատ արագ անցաւ համեմատելով ուղտերի հանդարտ քայլերին, որոնք հազիւ են այդպէս շուտ հասնում նրա ափերին։

Մեր ետևը շատ հեռուն թողնելով Մեռեալ ծովը — երբեմն բազմամարդ քաղաքների հայելիանման գերեզմանը, մենք շարունակեցինք ճանապարհը. բարձրանալով նեղ հովիտով, յանկարծ, բոլորովին անսպասելի կերպով, կարծես հրաշքով գետնից դուրս եկաւ մի քաղաք, մեր առաջ կանգնեց Երուսաղէմը։ Անվրդով խաղաղութիւն էր տիրում այնտեղ՝ ինչպէս անապատում, որովհետև, չընայելով քաղաքի պատերը մեզ երևում էին մօտիկ, մենք դեռ երկու մղոն հեռու էինք նրանից։

Չեմ կարող հաղորդել ձեզ, Թանկագին հայր, այն զգացմունքները, որոնցով ես համակւած էի ի տես Ս. Քաղաքի։ Նոյնը զգացել են մեր ազգի միջից միլիոնաւոր մարդիկ, և ինչպէս դուք ինքներդ ինձ ասել էք, նրանք ծանօթ են և ձեզ։ Բոլոր անցեալը՝ լուսաւորւած այստեղ կատարւած մեծ անցքերով. գերբնական հզօր անձնաւորութիւններ, որոնք այստեղ խօսել են Եհովայի հետ՝ կանգնեցին իմ առաջ, և ճնշելով ինձ իրանց վեհութեամբ, ստիպեցին ինձ ծունկ չոքել այս բացառական շնորքով սրբագործւած երկրի վրայ, որտեղ եղել է ինքը Տէրը և տւել է ազգին Իւր Աստւածային օրէնքները։

Մեր կանգնած սարի գագաթից ես կարողացայ զանազանել երեկոյեան զոհի մուխի խիտ ամպը, որ բարձրանում էր սեղանից դէպի երկնային կամարի անսահման տարածութիւնը. և ես աղօթում էի Տիրոջը, որ ողորմածաբար ընդունի իմ խոնարհ աղօթքը ձեզ և ինձ համար։

Մօտենալով քաղաքին՝ ինձ ցոյց տւին երկրպագութեան արժանի շատ տեղեր, և ես աչքովս տեսայ այն բոլորը, որոնց մասին գաղափար ունէի միայն մարգարէների գրքերով։ Ինձ թւում էր, թէ ես կանգնած եմ Եսայու և Երեմիայի ժամանակակիցներին աւելի մօտ, քան մեր սերնդին (ժամանակակիցներին). և իմ՝ Երուսաղէմում գտնւելուս առաջին երեք օրերում ես հաստատապէս ապրում էի միմիայն անցեալով, յարմարւելով սուրբ գրքերի հետ և համեմատելով տեսած տեղերս Աստւածաշնչի պատմածների հետ։

Սակայն, Դուք, Թանկագին հայր, հաւանական է՝ կրել էք միևնոյնը, հետևաբար կըհասկանաք իմ զգացած բաւականութիւնը։

Մենք մտանք քաղաք մօտ երեկոյեան ժամը 6-ին և շուտով հասանք մեր ազգական Ղևտացի Ամոսի տունը, որտեղ ես ընդունւեցի ինչպէս հարազատ աղջիկ։ Սրանք կարելի է մտածում են՝ բարեկամական վարւեցողութեամբ և ինձ համար պատրաստած տան շքեղ պատրաստութեամբ մոռացնել տալ հայրենի օջախս, որն ես թողել եմ։ Ռաբբի Ամոսը և իր ընտանիքը խնդրում են ինձ հաղորդել ձեզ իրանց անփոփոխ հաւատարմութեան հաւաստիքը։ Որովհետև տաճարում ծառայելու հերթը սրանն է, այս պատճառով ես դեռ շատ քիչ եմ տեսել սրան, բայց կարծես շատ բարի և ողորմած մարդ է, որ կաթողին սիրում է իր ընտանիքը։

Երէկ առաջին անգամ ես գնացի տաճար։ Նրա բակը յիշեցնում է ահագին քարւանսարայ, կամ շուկայի հրապարակ, ծածկւած ամբոխով և վաճառողներով, որոնք առաջարկում են գնողներին զանազան տեսակ կենդանիներ՝ զոհաբերութեան համար։ Բակի մէկ կողմը բռնում են հազարաւոր աղաւնիներ վանդակների մէջ, միւս կողմը կանգնած են ոչխարներ, այծեր, հորթեր, ցուլեր՝ այդ նպատակի համար շինւած մսուրներում, որոնց մռնչիւնը միախառնւելով մարդկային ձայների և զանազան տեսակ բարբառների հետ, դարձնում են Եհովայի տաճարը ահագին աղմկալից վաճառանոց։ Տիրոջ տան այսպիսի խանգարումը ինձ թւեցաւ սրբապղծութիւն և ոչնչով չէր յիշեցնում մեր նախահայրերի մեծահանդէս պաշտամունքների վսեմութիւնը։ Ես ուրախ էի, երբ վերջապէս անցայ բազմամարդ շուկան, որտեղ մեղքերի քաւութեան համար զոհեր ծախելու պատրւակով կատարւում են ամեն տեսակ առևտրական գործեր, և յաջողութեամբ հասայ կանանց բաժանմունքը։

Տաճարի ներքինը ապշեցրեց ինձ իր հոյակապութեամբ։ Ես երկար կանգնել էի՝ անկարող լինելով ազատւիլ ինձ տիրած հիացումից։ Ես չէի կարողանում հայեացքս հեռացնել Սրբութիւն Սրբոցից. ոչ մի ժամանակ ես այնքան մօտիկ չէի զգացել ինձ Աստծուն։ Խունկի ամպեր էին անցնում աղօթող բազմութեան վրայից և արեան գետեր էին հոսում սեղանի մարմարէ աստիճաններից։ Ափսոս. որքան անմեղ զոհեր են ընկնում ամեն առաւօտ և երեկոյ՝ Իսրայէլի մեղքերի համար։ Ինչպիսի սարսափելի, խորհրդաւոր գաղտնիք է ծածկւած մեղքի՝ անմեղ գառան արիւնով քաւութեան մէջ։ Ի հարկէ, Թանկագին հայր, այս զոհաբերութիւնները պէտք է ունենան մեզ անյայտ նշանակութիւն։

Տաճարից տուն վերադառնալով՝ ես պատահեցի բազթիւ մարդկանց, որոնք ոտքով և ձիով գնում էին դէպի քաղաքի դռները։ Այս օրերում ես լսեցի, որ շրջակայքում յայտնւել է մի զարմանալի մարդ, ինչպէս ոմանք հաստատում են մինչև անգամ՝ Աստծու ճշմարիտ մարգարէ, որի սրբութիւնը շատերն էին վկայում։ Նա գտնւում է անապատում, Յորդանանի կողմերը, քաղաքից 15 մղոն հեռաւորութեամբ և քարոզում է այնպիսի համոզեցուցիչ զօրութեամբ, որպիսին չեն կարող յիշել Եղիայի և Եղիսէի ժամանակներից յետոյ։ Բազմաթիւ ժողովուրդ ամեն օր Երուսաղէմից դիմում է Նրա մօտ, որ լսէ Նրա վարդապետութիւնը։ Նա բնակւում է անապատում, ապրում է արմատիքներով և վայրենի մեղրով, խմում է միայն ջուր և հագած է գազանի մորթ։ Գոնէ այսպէս է հաղորդում ժողովրդական ձայնը։ Մենք էլ յուսանք, որ Աստուած յիշելով Իսրայէլին, ուղարկում է մեզ, յանձին Նրա, իր ճշմարիտ մարգարէին. Բայց ափսո՜ս. այն օրերը, երբ Նրանք իսկապէս յայտնւում էին, վաղուց են անցել, և աւելի շուտով պէտք է ընդունել, որ այդ մարդը ոչ այլ ինչ է, բայց եթէ յափշտակւած մոլեռանդ։ Այնու ամենայնիւ, Նրա ազդեցութիւնը անապատ գնացողների վրայ այնքա՜ն մեծ է, որ շատ շատերը տեսնում են նրանում Աստծու ընտրած մարդ, որի մէջ բնակւում է ճշմարիտ մարգարէի հոգին։

Մնաք բարով, Թանկագին հայր, անվերջ աղօթենք Իսրայէլի ապագայ փառքի համար։ Ադինա։

Թարգմ. ՅՈՎՍ. ՔՀ. ՏԷՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆՑ

(Կըշարունակւի)

գիտութիւն

ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Առաջին շրջան. Կենդանական բարոյականութիւն

II

Մարդկային կեանքի գինը. պատերազմ և գերիներ. հիւանդներ, ծերեր. որդեսպանութիւն.

Մենք կաշխատենք որքան կարելի է սեղմել այս յօդւածը, որովհետև փաստերը նոյնքան շատ են և միմեանց լրացնող, որ բաւական է մի մի հատ թըւել ամեն տեսակից, իսկ մանրամասնութիւնների համար մենք կառաջարկենք մեր ընթերցողներին, բացի նորագոյն գրողներից, ինչպէս օրինակ Փրանսիացի Տարդը, Սպենսերը, Դարւինը, Հեկելին, Լէտուրնոն և այլն:

Ալտրուիզմ խօսքը մի նոր բառ է, որ գոյութիւն չունէր նախնական ժամանակների մէջ, երբ մարդու կեանքը չէր գնահատւում ամենևին, միշտ ենթակայ էր ամենօրեայ վտանգների և «բռունցքի ոյժին», բառիս ամենախիստ մտքով: Երեկւայ առողջ շրջող աւստրալիացին, վաղը կարող էր մորթւել, որպէս զի Նրա ճարպը կօշիկներ սրբելու ծառայէ *)։ Այս գնահատութիւնը յատուկ է բոլոր վայրենի ցեղերին, որոնք ապշութեամբ կամ կատաղութեամբ լսում էին միսիօնարներից թէ, օրինակ, Անգլիայում Թագաւորը իրաւունք չունի իր հպատակին կախելու:

Մենք արդէն տեղ տեղ յիշեցինք, որ պատերազմները սովորական են շատ վայրենիների մէջ և թէ յաղթւողները միշտ ուտելիքի տեղ էին ծառայում, և ամենագազանային և ամենախորամանկ միջոցներ գործ էին դնում այդ պատերազմներից յաղթող դուրս գալու համար: Այդ պատերազմները գովաբանւում էին նաև կրօնի մէջ, հանդերձեալ կեանքի մէջ երջանկութիւն խոստանալով, ուր պատրաստւած էին նրանց համար անթիւ եզներ և այծեր: Եւ իսկապէս «պատերազմի և կենդանիների որսի մէջ ոչ մի տարբերութիւն չկար»: Նոյն ինստինկտը աւար և պաշարեղէն դիզելու: Այսպէս են և հարաւային և հիւսիսային ամերիկացիք, հնդկաստանցիք և բրազիլիացիք, պապուացիք և այլն: Եւ սրանց քաջութիւնը գովաբանւում է նրանով, որ իրանց թշնամիների և ամբողջ սերունդների մաքրագործել են: «Սպանել քնած ժամանակ, դարան լարել միայնակ անցորդին, գաղտագող հետևել ճանապարհին կնոջ — այս ամենը արժանի են մեծ խրախուսանքի, ասում է Դիւշայլի: Զարգացման հետ և քչանում են պատերազմների առիթները: Տասմանիայում և Աւստրալիայում սովորութիւն կար, որ պատերազմների միջոցին երկու ախոյեաններ մենամարտում էին, փոխանակ ընդհանուր կոտորածի, բայց սա, ի հարկէ, բացառութիւն է: Պատերազմները դեռ այժմ էլ մեծ տեղ են բռնում և ոչ մի եւրոպացու համար մի արտասովոր բան չէ ռմբակոծել մի քաղաք, ուր մնացել է բնակիչների մի փոքրիկ թիւ: Սասունի կոտորածը փառաւոր մի փաստ է, որ քաղաքակրթւած Եւրոպայում այսօր դեռ ապրում են ազգեր, որոնք պատկանում են բարբարոս շրջանին:

Այնտեղ, ուր կեանքի ապահովութիւնը բռունցքի ոյժից է կախւած և ամեն մարդ ապաստանում է միայն իր ֆիզիկական ոյժերին, երևակայեցէք թէ ինչ կլինի ծերերի, մանուկների և հիւանդների դրութիւնը: Ներկայումս ծերերին ուրիշներն են ապրեցնում, մանուկներին մեծացնում են հազար ու մի հոգսերով ու զրկանքներով, հիւանդներին խնամում են մինչև վերջին շունչը: Այդ բաների համար կան նոյն իսկ հասարակական հաստատութիւններ և խընամող քոյրեր: Բայց վայրենիների մէջ այդ բոլորը չտեսնւած երազներ են, քանի որ փոխադարձ համակրանքն ու յարաբերութիւնները այնքան սուր են և կենդանական, որ ամեն մարդ սահմանաւորւած է միայն իր ստամոքսով, առանց որևէ այլ կարիք զգալու: Հիւանդի տանջանքները վերջացնելու համար նրան կենդանի թաղում են, իսկ եթէ շատ ձանձրացան, թողնում են մի անմարդաբնակ տեղ և հեռանում են: Այս բանն այնքան արմատանում է, որ կրօնը նոյն իսկ սրբագործեց այդ վարմունքը: Վիտիացիք հաւատում են, թէ ինչ հասակի մէջ որ մարդ թողնէ աշխարհը, նոյն հասակով նա յարութիւն կառնէ միւս աշխարհում, ուստի և ջանք էին գործ դնում միշտ իրար շուտ ուղարկել այդ միւս աշխարհը: Եւ, ի հարկէ, ամենից շատ տուժում էին ծերերը, որոնք սակայն շնորհակալութեամբ ընդունում են իրանց զաւակների հրաւէրը, թէ ժամանակ է մեռնելու: «Այդ ծերին դնում են գերեզմանի մէջ, մեծ խնամքով խեղդում էին, հրաժեշտի լացով և համբոյրներով: Սա պարտականութիւն էր, ուրեմն և բարոյականութիւն, որ դարձեալ բղխում էր վայրենիների անմիջական օգտի տեսակէտից: Մի պարտականութիւն, որին մենք այժմ ամենաքիչը կանուանենք գազանութիւն:

---

*) Шопенгауэръ. Основ. морал.

Հարաւային ամերիկացիք խեղդում են իրանց հիւանդներին, իսկ էսկիմոսները թաղում են ծերացած ծնողներին կամ գետնի և կամ սառցային խրճիթների մէջ: Կամչատալները նոյնն են անում և յետոյ մարմինները ձգում են շների առաջ, որը համարւում էր որդական յարգանք դէպի այդ ծնողները — այս կեանքում շների կերակուր դառնալ՝ կընշանակի միւս կեանքում ամենալաւ շների վրայ հեծած զբօսնել: Կաֆրները, բուշմենները, բատոտաները նոյն կերպ են վարւում: Հետաքրքիր է և այն որ շատ անգամ ծնողները իրանք են խնդրում, որ իրանց սպանեն, որպէս զի աւելի առողջ դիրքով ներկայանան միւս աշխարհում: Իսկապէս ամեն բանի մէջ, նոյնպէս և այստեղ պատահել են բացառութիւններ. օրինակ, Նոր-զելանդացիք յարգում են ծերերին և ծնողներին: Սա ի հարկէ, զանազան հանգամանքների անսպասելի զուգադիպութեան արդիւնք է: Սոյնանման *կոնտրաստներ* կարող են շատ անգամ պատահել: Մի տեղ եթէ անցողական շրջանի մէջ է, նրա մէջ միաժամանակ կարող են երեւան գալ և անցածի հակումները և ներկայի ինստինկտները և ապագայի նոր ծլած պահանջները:

Մանկասպանութիւնը նոյնքան սովորական է: Ամբողջապէս իմպուլս, իր անմիջական կրքերին գերի, վայրենին շատ անգամ իր բարկութիւնը թափում է փոքրերի գլխին: Բայրոնը ականատես է եղել թէ՛ ինչպէս Հրոյ երկրում մի հայր ջախջախել է որդու գլուխը ժայռին խփելով, նրա համար, որ վերջինս թափել է կողովի մէջ ժողոված ծովային հաւկիթները: Երեխաներին սպանում են նոյնպէս ծանրութիւնից և հոգսից ազատուելու համար, օրինակ Տասմանիայում, Մելանեզիայում: Յաճախ մայրերի մահով, երեխաներին էլ ողջ ողջ հետները թաղում էին: Սա, ինչպէս և երկւորեակների սպանումը, տարածուած են շատ տեղեր: Աւելի ստոր գին ունէին աղջիկները: Բուշմենները պակասաւոր կամ թոյլ մանուկներին ողջ ողջ թաղում են: Նոյնն էր անում և հռչակաւոր Սպարտան: Ուրիշ տեղեր սովորութիւն կար երրորդ կամ չորրորդ երեխային սպանել: Մարկիզեան և Ընկերութեան կղզիների վրայ ամեն անհատի վրայ պարտականութիւն կար մի երեխայ սպանել, և որ կինը այդ չէր կատարում, նա ենթարկւում էր անարգանքի և վռնդւում էր հասարակութիւնից:

Այս ամենը բղխում է սեպհական կաշւի համար դողալուց: Մանկասպանութիւնը գոյութեան կռւի մի նոր միջոց է, հասարակական ամենաստոր կազմակերպութեան մէջ, մի միջոց, որով անհատը և ընտանիքը ապահովւում են իրանց նիւթական դրութիւնը: Մանաւանդ որ վայրենի ցեղերի մէջ զաւակները համարւում են ծնողների անմիջական սեփականութիւն, և վերջինները ոչ մի պատիժ չեն կրում: Իսկ այդ աւելորդ բեռից ազատուելու ցանկութիւնն այնքան զօրեղ է, որ մեռցնում է մի ուրիշ դարձեալ զօրեղ բան — սերնդի պահպանելու զգացումը:

Երեխաներին շատ անգամ սպանում են դեռ նրանք աշխարհ չեկած, Նոր Գալեդոնիայում, Տասմանիայում, Տոնկայում, առհասարակ վայրենիների մէջ: Այդ անում էին առհասարակ որ հասարակութիւնը չբազմանայ, և այդ անելու համար կային յատուկ պառաւներ, որոնք «մի քանի հարւած տալով յղի կնոջ փորին, ստանում էին ցանկալի արդիւնքը»:

Ժամանակի ընթացքում այս ամենը արգելեց օրէնքը, բայց չծնած մանկասպանութիւնը աւելի ուշ ենթարկւեց այդ օրէնքին: Մինչ իսկ այժմ էլ ամեն տեղ կըգտնէք կանայք հասարակութեան զանազան խաւերի մէջ, որոնք, օրինակ ամօթից ստիպւած, ոչնչացնում են իրանց յղութիւնը: Թէև օրէնքը բացարձակապէս այդ արգելում է, բայց դրա վրայ աւելի թեթև աչքով են նայում:

Միւս գլխում մենք կըխօսենք կանանց, սեռային յարաբերութիւնների, սիրոյ և ամօթխածութեան մասին:

ԵՐ. ՊԱԼԵԱՆ

ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ԻՇԽԱՆ ԲՈՐԻՍԻ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ.

Փետրուարի 3-ին Սոֆիայում Բուլղարիայի իշխանի որդի Բորիսը մտաւ օրթոդոքս եկեղեցու գիրկը և հիմք դրուեց բուլղարական դինաստիային։

Դեռ մկրտութիւնից մի քանի օր առաջ քաղաքը զարդարւած էր ռուսական, բուլղարական և տեղ-տեղ տաճկական դրօշակներով։ Սոֆիան կոկւել, պճնուել էր և լցւում էր Եւրոպայի ամեն ծայրերից եկող հիւրերով և ներկայացուցիչներով։

Փետրուարի 2-ին, առաւօտեան 6 ժամին արտակարգ գնացքը ուղի ընկաւ դէպի սահմանը դիմաւորելու ռուսաց Կայսրի ներկայացուցիչներին։ Ժամը 9-ին կոմս Գոլէնիշչէւ-Կուտուզով հասաւ Ցարիբրոդ և նստեց իշխանական գնացքը, ուր նախաճաշ էր պատրաստւած։ Ժամը $12^1/_2$-ին գնացքը հասաւ Սոֆիա։ Կայարանում ժողովել էին մինիստրների խորհրդի նախագահը, քաղաքագլուխը, քաղաքի իրաւասուները, ազգային ժողովի նախագահը, պատգամաւորները, բոլոր զինւորական ու քաղաքացիական բարձրաստիճան պաշտօնեաները և ժողովրդի խուռն բազմութիւն։ Ֆերդինանդ իշխանը կայարան եկաւ գնացքը հասնելուց առաջ։ Հազարաւոր բերաններից դուրս եկած «ուրաներով» ողջունւեց գնացքի մուտքը։ Կոմս Կուտուզովը ուղղակի դիմեց իշխանին, որը մեկնեց ձեռքը իշխանին և մինիստրներին ներկայացրեց նրան։ Գեներալը իր կողմից ներկայացրեց իշխանին, Չարիկովին և Նելիդովին։ Ապա իշխանը գեներալի հետ միասին կառք նստելով՝ գնացին պալատ, շրջապատուած պատուաւոր պահակախմբով, որ բաղկացած էր դւարդիականներից, ժողովրդի ուրախ աղաղակներով։ Ժամը 3-ին իշխանը ունկընդրութիւն ընդունեց գեներալին, իսկ $3^1/_2$-ին ներկայացաւ իշխանին Չարիկովը։ Մինչդեռ շարունակւում էր գաղտնի խորհրդակցութիւնը իշխանի և գեներալի մէջ, Չարիկովը՝ Ստանչէւի ընկերութեամբ մտաւ ռուսաց դեսպանութեան տունը, իբրև Ռուսիայի դիպլոմատիկական ագէնտ և այդպիսով վերահաստատեց, ութ տարուայ ընդմիջումից յետոյ, նախկին բարեկամութեան և եղբայրական յարաբերութիւնների կապերը։

Կոմս Կուտուզովը այցելեց Էկզարխին, որ խոյն փոխադարձ այցելութեան գնաց կոմսին։ Ռուսաց դիպլոմատիկական գործակալութեան տան առաջ ժողովրդի մեծ բազմութիւն էր կանգնած ամբողջ օրը։ Ժամը 5-ին եկաւ այդտեղ կոմս Գոլէնիշչէւ-Կուտուզովը, որին ողջունեցին փոթորկալից «ուրաներով»։ Գոհաբանական հանդիսաւոր մաղթանք կատարեց գործակալութեան գործունէութեան վերսկսման առիթով։ Երբ սարկաւագը երկարակեցութիւն մաղթեց Թագաւոր Կայսրին, Թագուհի-Կայսրուհուն և ամբողջ թագաւորական տան, գործակալութեան տան վրայ բարձրացրեց ռուսական դրօշակը։ Տան առաջին հրապարակը թնդաց անվերջանալի ուռաներով. ժողովուրդը սկսեց պահանջել, որ նրան ցոյց տան ռուսաց Ցարի դեսպանին։ Կոմս Գոլէնիշչեւ-Կուտուզովը դուրս եկաւ ժողովրդի առաջ, ողջունեց եռանդագին ցոյցերով։ Պետր Ստանչէւ դիմեց կոմսին ժողովրդի անունից և ասաց. «Բուլղարական ազգը բազմամեայ անցքերից յետոյ երջանիկ է, որ ողջունում է ի դէմս ձեր Ռուսաց Ցարին, բուլղարական ազգի պաշտպանին, Նորին Կայսերական Մեծութիւն Նիկոլայ II-ին, որ վերահաստատեց բարեկամական յարաբերութիւնները ազատուածների և ազատարարների մէջ։ Թող Աստուած պաշտպանի ապագայում բազմաչարչար ազգը սլաւոնական և օրթոդոքս եկեղեցու բազմաթիւ վաղեմի թշնամիներից։ Կեցցէ Ռուսաց Ցարը, սլաւոնների և ուղղափառութեան պաշտպանը։ Ուռա»։

Կոմսը ողջունեց և շնորհակալութիւն յայտնեց ժողովրդին և երբ գնում էր պալատ, ժողովուրդը շրջապատեց նրա կառքը։ Երեկոյեան ժամը 8-ին պալատում մեծ հանդիսաւոր ճաշկերոյթ էր ի պատիւ ռուսաց արտակարգ դեսպանութեան, իսկ ճաշից յետոյ պարահանդէս՝ զինուորական դպրոցում։

Ռուսաց նոր դիպլոմատիկական ագէնտ Չարիկովը հասնելուն պէս՝ գնաց մինիստրների խորհուրդը և յանձնեց Ստոյլովին իր հաւատարմաթղթերը։ Յետոյ նա այցելեց միւս դիպլոմատիկական ագէնտներին։ Երեկոյեան պաշտօնապէս ընդունեց իշխանից։

—

Փետրուարի 3-ին, առաւօտեան ժամը 10-ից Սոֆիայի մայր եկեղեցին սկսեցին գալ Բուլղարիայի պետական անձինքը, դեսպանները, մինիստրները, ազգային ժողովը, պատգամաւորութիւնները, մամուլի ներկայացուցիչները, նշանաւոր քաղաքացիներ և ընտանիքներ։ Դրանց բոլորի ներկայութեամբ կատարուեց մկրտութեան հանդէսը էկզարխի ձեռքով, որին օգնում էին բոլոր միտրոպոլիտները և բարձր հոգևորականութիւնը։ Արարողութիւնը վերջանալուց յետոյ գոհաբանական մաղթանք կատարուեց և երկարակեցութիւն մաղթուեց առաջ՝ «Ամենաինքնակալ ուղղափառ Թագաւոր Կայսր Նիկոլայ II-ին, ամենայն ռուսաց ինքնակալին, կայսրուհի Ալէքսանդրա Ֆէոդորովնային և ամբողջ թագաւորական տան», իսկ յետոյ՝ բուլղարական իշխանին, բուլղարական իշխանուհուն և բարեպաշտ իշխան Բորիսին։ Բուլղարների ուրախութիւնը անսահման էր։

Եկեղեցական ծէսը կատարելուց յետոյ ստացուեց Վիէննայից հեռագիր, որ յայտնում էր թէ Աւստրիան ճանաչում է բուլղարական իշխանին և միանում է Ռուսիայի, Ֆրանսիայի, Տաճկաստանի, Սերբիայի և Ռումինիայի հետ։ Կայսր Նիկոլայ II-ի տուած մի նշանով, ռուսաց դիպլոմատիան լուծեց երկար տարիների ընթացքում չը լուծուող հարցը։

—

Փետրուարի 7-ին իշխանը ռուսաց մամուլի ներկայացուցիչներին արքունիք՝ նախաճաշի հրաւիրեց։ Տանտիրոջը փոխարինող սենեկապետ Ստանչէւ գեղեցիկ պատճառաբանուած կենաց առաջարկեց ի պատիւ մամուլի ընդհանրապէս՝ և ռուսաց մամուլի՝ մասնաւորապէս։ Կամարովը պատասխանեց՝ թէ «ռուսները ոչ միայն մի մեծ սրտայոյզ դէպքի ներկայ եղան, այլ և արտասովոր սիրելիութեան հանդիպեցին իշխանի կողմից, ծանօթացան նրա այնքան հարուստ անձնաւորութեան փայլուն կողմերի հետ» և իշխանի ու նրա տան կենացն առաջարկեց։ Շուտով եկաւ և իշխանը նախարարների խորհրդից։ Նա չափազանց սիրալիր էր և հետևեալ խօսքերն արտասանեց. «Ողջունում եմ մամուլի ներկայացուցիչներին՝ որպէս հասարակական կարծիքի արտայայտիչների։ Մամուլից ես անաչառութիւն և արդարութիւն եմ սպասում։ Դուք տեսաք, թէ վերջին ժամանակներս ինչ են արել բուլղարները՝ մնալով երախտագէտ դէպի Ռուսիան. դուք տեսաք բուլղարացուն, որ հայրենասէր է մնում, որ իր աւանդական իդէալներն իրագործելու ձգտումով է լցուած։ Բուլղարիան ամուր պահպանում է այն ոյժով, որի մի մասն է ինքը և որի անունն է սլաւոնականութիւն։ Այդ ոյժին ուղղութիւն է տալիս նրա հիւսիսային մեծ քոյրը։ Հէնց դրա համար սլաւոն աշխարհի վրայ այնքան խորին տպաւորութիւն թողեց իշխան Բորիսի մկրտութիւնը։ Ես առաջարկում եմ այդ սլաւոնական ոգու կենացը»։ Կենացը խորին զգացմունքով և շնորհակալութեամբ ընդունեցաւ։ Նախաճաշից յետոյ՝ իշխանը շնորհաւորեց ռուս հրապարակախօսներին՝ շքանշանների շնորհմամբ։

ՍՈԼԶԲԻՒՐԻ ԿԱԲԻՆԷՏԻ ԱՆԴԱՄ ԲԱԼՖՈՒՐԻ ՃԱՌԻՑ

«Ես ցանկանում եմ ամենից առաջ հերքել այն կարծիքը, թէ անգլիական կառավարութեան գործողութիւնները արգելք եղան Ռուսաստանին իր միջամտութեամբ խաղաղացնել այն գաւառները, ուր տեղի ունեցան կոտորածները։ Դա ճիշտ չէ։ Անգլիայի աջակցութեան չեն դիմել ոչ այս ոչ այն մտքով։ Ռուսաստանը չէր կամենում իր վրայ վերցնել այդ պարտաւորութիւնը, և մենք չէինք կարող նրան խանգարել անելու այն, ինչ որ նա երբէք չէ էլ ցանկացել անել։ Բոլորովին սխալ է ենթադրել, իբր թէ մեր քաղաքականութիւնը կամ մեր դէպի Ռուսաստանն արտայայտած նախանձը, կամ մեր կողմից յանցաւոր երկչոտութիւնը պատճառ եղան Ասիական Տաճկաստանի սոսկալի դէպքերին։

Եթէ Տաճկաստանում կան պետական անձինք, որոնց համար թանգ է պետութեան գոյութիւնը, նրանք չեն կարող չըտեսնել ու ժամանակակից պատմական դէպքերից ոչ մէկն այնքան լի չէ կանխագուշակ նշաններով Տաճկաստանի ապագայի մասին, ինչքան այն փոփոխութիւնը, որ կատարւեց Անգլիայի հասարակական կարծիքի մէջ Տաճկաստանի վերաբերմամբ, վերջին տասն և ութ ամիսների դէպքերից յետոյ։

Տաճիկ կառավարութեան համար հեշտ էր արհամարհել այս կամ այն կառավարութեան նախարարի անշահախնդիր խորհուրդը, բայց այն քաղաքականութիւնը, որին Տաճկաստանը հետեւում էր վերջին տասնութ ամսուան ընթացքում, չէ կարող շարունակ անպատիժ մնալ։ Տաճկաստանի կառավարութեան յանցանքով, թէ դժբախտութիւնից, նա զրկւեց իր առաջւան պաշտպանութիւնից, նա զրկւեց անգղիական ազգի հաւատից, մենք այլեւս չենք հաւատում թէ Տաճկաստանը ընդունակ է ռէֆորմների, թէ Տաճկաստանի գոյութիւնը կարող է մարդկութեան բարիքին ծառայել»։

գեղարուեստ

թատրոն, երաժշտութիւն

Վերջացան օպերային և հայ ու վրաց դրամատիկ ընկերութիւնների ներկայացումները։

Հայ դերասանական ընկերութիւնը շատ գոհ է այս սեզոնից և այս տարւայ փորձը նրան համոզեց, որ կարող է նոյն ընկերական հիմունքներով յաջող առաջ տանել հայ ժողովրդական թատրոնի գործը։ Տարւայ կիսին, ճշմարիտ է, հայ ներկայացումները մուտքի կողմից անյաջող էին, ընկերներից ոմանք սկսել էին ասամները կրճատացնել, յուսահատւել, սակայն նրանք չը կորցրին իրանց կամքի ոյժը և սեզոնի վերջին տեսան կամքի ոյժի հզօր հետեւանքը։ Անշուշտ առաջիկայ տարին ընկերութեան այդ անդամներին կը միանան և երբեմն մշտական խմբի ցիրուցան եղած արտիստները և հայ թատրոնական գործը կըդնեն աւելի հաստատ և աւելի որոշ հիմունքների վրայ։

Ուրախութեամբ տեղեկանում ենք, որ մի քանի ներկայացումների համար Պոլսից հրաւիրւած են դերասաններ, որոնց թւում օրիորդ Գարագաշեանը։ Հայ դրամատիկ ընկերութեան արտիստները մտադիր են արտիստիկական ճանապարհորդութիւն անել Կովկասում և բանակցութիւն են կամենում սկըսել Շուշում պ. Խանդամիրեանի թատրոնը ամառւայ սեզոնին վերցնել, ուր շաբաթական 2—3 ներկայացում միշտ տալիս է լիքը մուտք։

Օպերային խմբի անդամները մի երկու մասի բաժանւած՝ դիտաւորութիւն ունէին Անդրկովկաս գնալ, սակայն նրանց այդ մտադրութիւնը խոչընդոտների հանդիպեց։

Բագւում պ. Պ. Զուրաբով հրաւիրել է օր. Պապայեանին և իտալական օպերային ուրիշ արտիստներ, ու առաջիկայ շաբթից Բագւում ներկայացումներ են սկսւելու։

ԽԲՍՏԱԶԸ ԹԻՖԼԻՍԻ ԲԵՄԻ ՎՐԱՅ

Յունւարի 18-ին բանկային թատրոնում հայոց ներկայացման Շիլլերի Աւազակների հերոս Ֆրանց Մօօրը—պ. Սաֆրազեան կախւել էր (ըստ պիէսի), սակայն՝ իր խաղին բոլորովին ռէալականութիւն տալու համար՝ նա իր զօտիից մարուկներ չէր շինել, այլ ուղղակի պարանը գցել էր վիզը, այնպէս կախւել ու մի քանի վայրկեան էլ մնացել նոյն դրութեան մէջ եւ անշուշտ պ. Սափրազեան կըխեղդւէր, եթէ հասարակութիւնից չըգոռային նրան ազատել։ Միւս դերասանները բեմի վրայ իրանց խաղով հրապուրւած՝ չէին նկատել նրա վիճակը։

Իսկ անցեալ շաբաթ, փետրւարի 3-ին նոյն բանկային թատրոնում պիտի սպանւած լինէր վրաց երիտասարդ դերասան պ. Աղամիձէն պ. Գունիայի Քոյր և Եղբայր ողբերգութեան ներկայացման, եթէ դերասանուհի իշխանուհի Աւալովան իր ձեռքի դաշոյնը 1/4 սանտիմետր էլ խորը ցցէր նրա կրծքում։ Քոյր և Եղբայր պիէսի վերջին գործողութեանը՝ հեղինակը իր հերոսուհու ձեռքով դաշոյնը խրում է տաճկաց դեսպանի կուրծքը, եւ ահա շնորհաշուք իշխանուհի Աւալովան այնպէս էր մտել իր դերի մէջ, որ մոռանալով թէ բեմի վրայ է եւ իր դիմացինը ոչ թէ իսկական տաճկաց դեսպանն է, այլ իր ընկեր դերասան Աղամիձէն, դաշոյնը ցցել էր իր ախոյեանի կուրծքը եւ չընայած, որ նա արնաքամ էր լինում, սակայն տ. Աւալովան առանց սթափւելու՝ շարունակեց դեռ մի քանի րոպէ էլ իր զգացած խաղը։

Զաքի փաշան

Դերասան Աղամիձէին տարան քաղաքային հիւանդանոց, ուր կապեցին նրա վէրքը որ բժիշկների վկայութեամբ մահաբեր կըլինէր այդ, եթէ 1/4 սանտիմետր էլ աւելի խրւած լինէր դաշոյնը վիրաւորեալի կրծքում։ Այժմ փտանգն անցած է համարւում եւ Աղամիձէն մինչեւ մի ամիս բոլորովին առողջ կըլինի։

իսկական բարեկենդան

Անցեալ շաբաթ, փետրւարի 3-ին իսկական բարեկենդան էր այն հայերի համար, որոնք կամեցել էին պարծանալ և այնպէս բարեկենդան անել, որ իրանց հետ քաղաքիս շատ շատ քաղցածներ էլ կուշտ լինէին։

Յարգելի տ. Մարիամ Ծովիանեան շատ յարմար օր էր ընտրել այս տարի քաղցածներին կշտացնելու համար իր երեկոյթը կազմելով։

Առանց կանխաւ ազդարարելու իր երեկոյթի ծրագիրը, առանց սրան-նրան տոմսակ ուղարկելու, Թիֆ. ժողովարանի մեծ դահլիճը և սրահը լցւել էր քաղաքիս հայ հասարակութեամբ։ Ներկայ էր ամբողջ Սոլոլակի առանց բացառութեան։ Բազմութիւնը այնքան շատ էր, որ անցուդարձ անել համարեա թէ անհնար էր։ Ներկայ էին ռուս և վրացի մի քանի ընտանիքներ էլ։

Կոնցերտին մասնակցում էին սիրողներ՝ տ.տ. Միւլիտինա, իշխանուհի Գուրամովա և քնարահար Դիւմօ, տէնոր Մայինա, դաշնակահար Ակսամաև, պ. պ. Նէյման, Մեսխի։

Շնորհակալ լինելով մասնակցողներից բուն էսթէտիկ վայելչութիւն պատճառելու համար հանդիսականներին և մի առ մի չքննելով նրանց երգն ու նւագածութիւնը, մենք կանգ ենք առնում միայն իշխանուհի Գուրամովայի երգելու գեղեցիկ տեխնիկայի և սիրուն ձայնի վրայ։ Յարգելի երգչուհին աւարտել է Վիէննայի կոնսէրւատորիայում և եթէ չենք սխալւում, մի կարճ ժամանակ երգել է և Միւնխէնում։ Տիկինը ունի կոլորատուր սոպրանօ, սքանչելի ելևէջներով, երգում է հմտութեամբ, թողնում է շատ գեղեցիկ տպաւորութիւն։ Կրկին շնորհակալ պիտի լինենք և տիկին Մ. Տոլխանեանից այդ սքանչելի երգչուհին Թիֆլիսի հասարակութեան հետ ծանօթացնելու համար։ Ինչ ասել կուզէ, որ որոտալից և փոթորկալից ծափահարութիւններն անընդհատ շարունակւում էին այնքան՝ մինչև սիրալիր իշխանուհի երգչուհին չըդադարեց պրօգրամայից դուրս երեք ռօմանսներ ևս, որոնցից մէկը ռուսերէն, երկուսը գերմաներէն։

Պ. Նէյման բաւական գեղեցիկ արտասանեց երկու ոտանաւորներ ռուսերէն լեզւով, որոնցից մէկը՝ նշանաւոր «Սակիա-Մունի» բանաստեղծութիւնը, որ տպագրւած է 94 թ. Տարազի № 35-ի մէջ։

Պ. Մեսխի վրացերէն լեզւով մի քանի ժողովրդական կեանքից շատ ծիծաղաշարժ ոտանաւորներ կարդաց, բայց մեզ շատ զարմացրեց, որ այդ երեկոյ հայերէն ոչ մի բառ ոչ երգւեց, ոչ արտասանւեց և հայերից ոչ ոքի չըտեսանք էստրադի վրայ։ Միթէ հայերը գեղարւեստի ոչ մի ներկայացուցիչ չէին կարող ունենալ հաւասար գէթ նրանց, որոնք այդ օրը բեմ էին բարձրացել, կամ գուցէ Սոլոլակի բնակիչների ականջին շատ խորթ է հայ լեզուն և նրանց անհաճոյ, կամ գուցէ անկարելի էր հայ մի սիրող, մի արտիստ գտնել Թիֆլիսում, որ ներդաշնակութիւն կազմէր այն մասնակցողների հետ։ Կամ գուցէ հեռատեսութիւն են արել... երեկոյթի կարգադրիչները, և անշուշտ վերջին ենթադրութիւնը միայն կարող ենք անել. հեռատեսութիւն՝ որ բոլորովին սխալ, անտեղի և նոյն իսկ անտակտ է։

Հանդիսականների $^{49}/_{50}$-ական հայեր, $^{1}/_{50}$-ական ռուսներ, վրացիներ, գերմանացիներ և այլն և այլն. Երեկոյթի կազմողները հայեր, փող տւողները հայեր, ճաշարանի հիմնադիրները և պահպանողները հայեր, սակայն գեղարւեստական աշխարհից հայերն էին իրանց վռնդողները։ Կրկնում ենք անտակտ, անտեղի կարգադրութիւն։ Եւ ինչու ենք վշտանում, երբ օտարները մեզ միայն դրամի համար և միայն նրա շուրջը պտտողներ ու մտածողներ են համարում։ Ահա լաւ, հզօր փաստ մեր հակառակորդներին կրկին իրանց անհեթեթ եզրակացութիւններն անելու։

Ժողովարանի սրահում հայուհիները վաճառում էին ծաղիկ, շամպայն, որից հայերը տւին 600 րուբլի. ընդհանուր մուտք եղել է 2000 րուբլիաչափ, ծախք 400 ր.

Կոնցերտից յետոյ պարեր էլ կային։

Պաշտօնական

Երևանի նահանգապետ նշանակւել է Թիֆլիսի փոխ-նահանգապետ կոմս Տիզենհաուզեն, որ մի քանի տարի առաջ Երևանում այդ պաշտօնն ունէր և բարի անուն էր թողել այնտեղ։ Կոմս Տիզենհաուզենի տեղը Թիֆլիսի փոխ-նահանգապետ նշանակւել է Քութայիսի նահանգական ատենի անդամ գնդապետ Պրինց։

*

Գաւառական պետական գանձարաններին շուտով պէտք է թոյլատրւի բանկային մի քանի գործողութիւններ կատարել. 1) Տոկոսաբեր թղթերի գրաւականով փոխ տալ դրամ. 2) Ընդունել աւանդներ ընթացիկ հաշւով և ժամանակով. ընդունել զանազան տեղեր դրամական փոխադրութիւններ։

*

Շուտով պոստը պիտի ընդունի նոյնպէս դրամական փոխադրութիւններ, որով վերջ կդրւի ծրար կնքելու և երկար ու բարակ այն պրոցեդուրին, որ կատարւում է այժմ մի քանի րուբլիներ մի տեղից միւս տեղ ուղարկելու ժամանակ։

Դպրոցական

Ներսիսեան դպրանոցի հոգաբարձութիւնը վճռել է ձեռք բերել ուսումնարանի նոր շինութեան համար գետափում գտնւող Չիթախեանի մի ընդարձակ հողը 300 քառակուսի սաժէն, որ առողջապահական և մանկավարժական տեսակէտից ամեն յարմարութիւններ ունի։

—

Մոսկւայի ազնւականութիւնը մի միլիօն դրամագլուխ ունի պատրաստ, որ պէտք է գործադրի կանանց ինստիտուտ բանալու համար։

Մանր լուրեր

Պարիզից մեզ հաղորդում են, որ Պարսից Շահը տրամադիր է ներել Լոնդոնի իր նախկին դեսպան Մելքում խանին և մտադիր է առաջարկել նրան նոր պաշտօն։ Սադրազամը հրաւիրել է Մելքում-խանի եղբայր Իսկանդար-խանին, որ իր եղբօր պաշտօնանկ լինելուց յետոյ Թեհրանից ինքն էլ հեռացել էր, թողել պաշտօնը և գնացել Պարիզ՝ եղբօր մօտ։

—

Ռ. Հ. Գ. Կ. Պոլսից հեռագրում են, որ բազմաթիւ թիւրք երիտասարդներ են կալանաւորւած, որոնց թւում զինւորական նախարարի թիկնապահը։

—

Ջէյթունի ապաւինած 12000 փախստականներին, որ պէտք է յետ դարձնէին, իբրև Ջէյթունցիներին անձնատուր անելու պայմաններից մէկը, դրանց համար պաշար գտնելը դժւարութիւնների է հանդիպում։

—

Ձերբակալւած են Կ. Պոլսում զինւորական ուսումնարանի մի պրոֆէսոր, մի նաւապետ, շատ խուզարկութիւններ են եղել ծովային նախարարութեան մէջ և ծովային լրագրի խմբագիրը արտասահմանեան մի նաւով փախել է արտասահման։

—

Անգլիական կառավարութիւնը տասը միլիօն ֆ. ստեռլինգ է որոշել ծախսելու մի տարւայ ընթացքում հինգ ռազմանաւ, չորս առաջնակարգ յածանաւ, երեք երկրորդակարգ, վեց երրորդ կարգի և 20 ականակործան նաւեր շինելու։

Խառն լուրեր

Եփրատի վրայ, Քերեջիկում բռնութեամբ հազարաւոր քրիստոնեաների մահմեդականութեան են դարձրել։

Սուլթանը տեղեկանալով այդ մասին, կազմել է յանձնաժողով քննելու այդ եղելութիւնը։ Անգլիական դեսպանի առաջարկութեան համաձայն՝ այդ յանձնաժողովին մասնակցելու է Բրիտանիայի Ադանայի փոխ-հիւպատոսը։

—Լորդերի պալատը ընդունել է գահական ճառի ուղերձը։

—Սոլիսբիւրին յայտնել է, որ Ֆրանսիայի հետ անհամաձայնութիւնների վտանգն անցել է, Ամերիկայի հետ գժտութիւնները կըփարատուեն միջնորդ դատարանով. գալով հայկական խնդրին, Սոլիսբիւրին ասաց, որ Անգլիան ոչ մի պայմանով խոստում չունի սուլթանին պատերազմ յայտնելու, եթէ նա իր երկիրը լաւ չըկառավարէ։

—Կ. Պոլսում Ֆրանսիական դեսպան Կամբոնը տասնեմէկ ամիս իր հետ պատահած դժբախտութիւններից յետոյ, յունուարի 23-ին առաջին անգամ ճաշեց Իլդիզ-Քիոսկում և տեսակցութիւն ունեցաւ սուլթանի հետ։

—Առաջիկայ 1897 թ. լրանում է եւրոպական երեք պետութիւնների՝ Գերմանիայի, Աւստրո-Հունգարիայի և Իտալիայի մէջ եղած դաշնակցութեան պայմանաժամը։ Այս առիթով եւրոպական լրագիրները զանազան դիտողութիւններ են անում։ «Times»-ի ասելով այդ դաշնագրի պայմանաժամը լրանում է դեռ եօթը տարուց յետոյ, սակայն դաշնագիրը ստորագրող պետութիւններից իւրաքանչիւրը կարող է պայմանաժամի կէսը լրանալուց (1897 թ.) յետոյ բաժանուել կամ մնալ։

—Չինաց զօրքի մէջ ծառայող գերմանացի սպաները գոհ չեն իրանց վիճակից. նրանց յոյսերն ու ակնկալութիւնները չարդարացան, այդ պատճառով նրանցից շատերը վճռել են վերադառնալ հայրենիք։

—Սուլթանը հրաման է տուել բանտարկել Մուրադ-բէյին, իբրև քաղաքական յանցաւորի, որն օրէնքի համաձայն՝ պէտք է մահուան դատապարտուի։ Մուրադ-բէյը փախել էր Պարիզ։

—Ենթադրում են, որ զէյթունցիներին կարելի կըլինի համոզել զինաթափ լինելու, եթէ նրանց մօտ թողնեն իրանց տնային և որսորդական զէնքերը։

—Օսմանեան բանկի հետ երեք միլիոն լիրայի փոխառութեան բանակցութիւնները վերջացել են։

—Ս. Թագադրութեան Մոսկւա կըգայ տաճկաց սուլթանի երեք հոգուց մի դեսպանութիւն։

—Սոլիսբըրիի կաբինետի անդամ և նրա ազգական Բալֆուր անհրաժեշտ է համարում կազմել անգլո-ամերիկական մի դաշինք աշխարհիս խաղաղութեան համար։

—Չորս օր Ռուսաստանից պոստը չէր ստացւում, ռազմա-վիրական ճանապարհը ձիւնով ծածկուած լինելուն համար։

—Վիկտորիա թագուհու ներկայացուցիչը ս. Թագադրութեան՝ Կոննաուտի դուքսն են ենթադրում, որ կըլինի։

—Կ. Պոլսում, Новости-ի ասելով, տաճիկ կառավարութիւնը ձգտում է Անգլիային մօտենալ։ Սուլթանը Վիկտորիա թագուհուն բարեկամական մի նամակ է պատրաստում։

—Աւստրո-Հունգարիայի դեսպանութեան թարգմանը յանձնել է Բ. Դրան թիւրքերի ձեռքով սպանուած բոլոր հայերի ցուցակը։

—Արևելեան դպրոցների Ֆրանսիական ընկերութիւնը վերջին անցքերին վնասուած հայերի համար հանգանակութիւն է բացել և ժողովել 25,000 ֆռանկ, որ ուղարկուած է Ազարեան պատրիարքին և Կ. Պոլսի Ֆրանսիական դեսպանին։

—Ֆրանսիական սինդիկատը չինաց կառավարութեան հարիւր միլիոն դոլար փոխ է տալիս այն պայմաններով, որ կազմուած է ռուս-չինական փոխառութիւնը։

—Քորէայի թագաւորը և թագաժառանգը թագ են կացել ռուս միսիայի տանը։ Անգլիական հիւպատոսի ցանկութեամբ մի գունդ բրիտանական նաւաստիներ են բերուած բրիտանական միսիան պահպանելու համար։

—Սէուլ է եղել ուղարկուած ռուսաց մի գունդ, որի տեղ հասնելուց մի օր յետոյ է Քորէայի թագաւորը պատսպարուել ռուսաց միսիայում։

—Ազգային ժողովը, բուլղարական ազգի կողմից կէս միլիոն ֆրանկ նուէր արաւ իշխան Բորիսին։ Այդ գումարը վեր կառնուի իշխանի չափահասութեան օրը, երբ նա եռապատկուած կըլինի։

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Բաղու. Օր. Մ. Ս. Ուրախութեամբ կըտպագրէինք մօդաների մասին տեղեկութիւններ եւ պատկերներ, եթէ համոզուած չըլինէինք, որ այժմ անպատեհ է։ Շատ երիտասարդ օրիորդներ եւ տիկիններ Ձեր միեւնոյն խնդրով շարունակ դիմում են մեզ եւ մենք արդէն որոշել ենք գարունքից տպագրել մօդաներ էլ։ Կրկնում ենք չըճնաչող մօդը ճաշակն է, առանց ճաշակի ոչ Պարիզի մօդերը, ոչ Լիոնի մախմուրը եւ ոչ էլ Մանչեստրի ատլասը ու Բրուսէլի շղարշները կարող կըլինին փրկել կոպիտ ճաշակ ունեցողին։

Կ. Պոլիս, Ղադը դիւղ. Ն. Զ. Դ. Խմբագրութեանս հասցէով պ. Գաբրիէլին (Մեծատուրեան) յանձնելու մի շարք նամակներ ենք ստացել. պարտք ենք համարում յայտնել՝ որ նրա ուր լինելը չըգիտենք այժմ, դիմեցէք Պարիզ՝ Պաստէօրի ինստիտուտը, կամ հայ ուսանող. դրադարանին։

Տիեզերքի մէջ. Գարօ Պետրոսեան. Դարձեալ երբեմն երբեմն մեր հասցէով նամակ ենք ստանում Ձեզ յանձնելու. ստիպուած ենք կրկնել որ ազատ թողէք մեզ Ձեր յանձնարարութիւնից։ Ո՞վ էք, ո՞ւր էք, ովքեր են Ձեզ հետ թղթակցողները, միթէ չեն տեսնում, որ իրանց այդ նամակները տեղ չեն հասնում. Կըրկնում ենք, որ մինչեւ այժմ այդ նամակները մենք բոլորն էլ վերադարձրել ենք պօստին։

Խմբագիր-Հրատարակիչ՝
ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
և վաճառւում է բոլոր գրավաճառանոցներում
ԱԼԷՔՍԱՆԴՐ ԱՐԱՐԱՏԵԱՆՑԻ
գրքոյկը
ԵՐԿՈՒ ԹՈՒՄԲ
երկրորդ տպագր.
Գնողները կարող են դիմել հեղինակի այրիի մօր հասցէին. Ѳоминная ул. (5-мъ уч.), № 15, домъ Давришова.

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ
Տարեկան երկու գիրք.
Բաժանորդագինն է 2 ր. կամ 5 ֆր.
Դիմել՝ Въ ШУШУ, Ервaнду Лалаянъ կամ Schouscha, Ervand Lalayan.
Հրատարակիչ՝ Ե. ԼԱԼԱՅԵԱՆ
3—3

ОТКРЫТА ПОДПИСКА НА 1896 ГОДЪ

(XV годъ изданія)

на ежемѣсячный иллюстрированный журналъ для дѣтей школьнаго возраста

„РОДНИКЪ“

и педагогическій листокъ

„ВОСПИТАНІЕ И ОБУЧЕНІЕ“

„Родникъ“ въ **1896** году будетъ издаваться подъ тею же редакціею, въ томъ же духѣ и направленіи, что и въ минувшія 14 лѣтъ.

„Родникъ“ выходитъ перваго числа каждаго мѣсяца книжками большаго формата, со многими рисунками въ текстѣ, портретами и отдѣльными картинками.

„Въ 1896 году въ „Родникѣ“ между прочимъ будутъ помѣщены: вторая часть очерковъ изъ морской жизни К. М. Станюковича, подъ названіемъ: ВОКРУГЪ СВѢТА НА „КОРШУНѢ“, и новая біографическая повѣсть В. П. Авенаріуса: „ЖИЗНЬ И ПРИКЛЮЧЕНІЯ ГОГОЛЯ-СТУДЕНТА“.

Вмѣстѣ съ **„Родникомъ“** можно получать ежемѣсячный педагогическій листокъ **„Воспитаніе и Обученіе“**, посвященный вопросамъ **семейнаго воспитанія, домашн. обученія и дѣтскаго чтенія.**

„РОДНИКЪ“ рекомендованъ и одобренъ *учеными и учебнимъ Комитетами: Мин. Нар. Просв., Святѣйшаго Синода, Собственной Е. И. В. канцеляріи по учрежденіямъ Императрицы Маріи и Главн. Управл. военно-учебныхъ заведеній.* **Удостоенъ** *почетнаго диплома на педагогическаго выставкѣ Общества Трудолюбія въ Москвѣ.—Мин. Нар. Прос. признанъ* необходымъ *для выписки въ ученическая библіотеки городскихъ училищъ и учительскія библіотеки народныхъ школъ за всѣ годы его существованія (т. е. съ 1882 г.)*

Условія подписки на 1896 года прежнія:

Съ доставкой и пересылкой	На годъ.	На 6 мѣс.	На 3 мѣс.
По одинъ „Родникъ“	5 р.	2 р. 50 к.	1 р. 25 к.
На „Родникъ“ и педагогическій листокъ. . . „Воспитаніе и Обученіе“.	6 „	3 „ — „	1 „ 50 „
За границу.	8 „	4 „ — „	2 „ — „
Отдѣльно на педагогическій листокъ „Воспитаніе и Обученіе“.	2 „	1 „ — „	— „ 50 „

Адресъ конторы: С.-Петербургъ, Невскій пр., 106, при „Русскомъ книжномъ магазинѣ“ **Н. Н. Морева.**

За издателя **Н. Моревъ.** Редакторъ **АЛЕКСѢЙ АЛЬМЕДИНГЕНЪ.**

Открыта подписка на ежемѣсячный журналъ съ картинками **„Читальня Народной Школы“** (9-й годъ изданія). Цѣна съ доставкой и перес. **3** рубля въ годъ.

О подпискѣ на 1896 годъ на общепедагогическую еженедѣльную газету

„ШКОЛЬНОЕ ОБОЗРѢНІЕ“

(Годъ VIII.)

Съ приложеніемъ «СБОРНИКА» (г. IV), подъ редакціей М. Е. Виноградова.

Изданіе это, давая руководящія статьи для учителей и воспитателей по всѣмъ отраслямъ педагогическаго дѣла, родителямъ по вопросамъ домашняго образованія и воспитанія, отводитъ видное мѣсто для офиціальнаго отдѣла (правительственыя постановленія и распоряженія; труды ученыхъ комитетовъ, министерствъ и вѣдомствъ и пр.), весьма необходимаго для лицъ, соприкасающихся со школой, какъ-то: начальниковъ ученыхъ заведеній, членовъ городскихъ и земскихъ управъ, уѣздныхъ и губернскихъ училищныхъ совѣтовъ, попечителей училищъ и пр.,—всѣ они найдутъ въ „Школьномъ Оброзрѣніи“ массу справокъ и указаній по различнымъ практическимъ вопросомъ учебнаго дѣла и школьнаго быта; лица, ищущія интеллигентнаго труда, найдутъ въ отдѣлѣ „Справочный Указатель“ полезныя имъ свѣдѣнія. Сверхъ того, въ отдѣлѣ „Русская печать о школьномъ дѣлѣ“ редакція знакомитъ своихъ читателей съ мнѣніями и сужденіями другихъ изданій по извѣстному вопросу и тѣмъ достигаетъ правильнаго и безпристрастнаго освѣщенія предмета, столь необходимаго въ педагогическомъ дѣлѣ.

Ставя на первомъ планѣ вопросы педагогическаго характера, редакція „Школьнаго Обозрѣнія“ имѣетъ въ виду и общіе интересы небогатаго сельскаго учителя и поэтому въ каждомъ № будутъ помѣщать, соотвѣтственно программѣ, отдѣлы: „Политическія извѣстія“ и „Новости русской жизни“; такимъ образомъ, при скудныхъ матеріальныхъ средствахъ, каждый учитель, живущій въ глуши, можетъ вполнѣ довольствоваться нашимъ органомъ. Основные отдѣлы „Школьнаго Обозрѣнія“ будутъ восполняться въ каждомъ № текущими новостями. „Школьное Обозрѣніе“ въ 1896 г. выйдетъ въ 52 №№ съ **приложеніями** Годовымъ подписчикамъ въ видѣ **преміи** будетъ дана книга **О Германскихъ Университетахъ,** соч. герм. проф. Перев. и примѣч. русск. проф. СПБ. 1889 г. Ц. 1 р. 50 к., или будетъ сдѣлана скидка при выпискѣ журнала „Школьное Обозрѣніе“ за прежніе годы (1893—95 г.) на эту сумму.

Цѣна за годъ съ перес. и доставкою 5 р., на полгода.—3 р. и на три мѣсяца 2 руб.; для начальныхъ и народныхъ учителей—4 р. въ годъ, заграницу 6 руб. Допускается разсрочка платежа—по соглашенію съ редакціей №№-овъ и прежніе годы „Школьнаго Обозрѣнія“ не имѣется. Оставшіеся въ небольшомъ количествѣ полные комплекты газеты за 1893 можно получать за **два** руб. 1894 и 95 г.—по **три** руб. Библіотеки безплатныя читальни пользуются особой уступкой.

Подписчикамъ (годовымъ) предоставляется помѣщать **безплатно** всякія объявленія, относящія къ программѣ изданія.

Вышедшіе №№ „Школьнаго Обозрѣнія“ текущаго года по требованію, высылаются наложеннымъ платежемъ на счетъ конторы. Подписка принимается въ главной конторѣ „ШКОЛЬНАГО ОБОЗРѢНІЯ“. С.-Петербургъ, Загородный проспектъ, 34.

3—3

Дозв. ценз. Тифлисъ. 10 Февраля 1896 г. Типографія И. Мартиросіанца Орбел. ул., д. № 1—2.